



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1(56)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2021

ՄԱՐԶԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇԵՐՏԵՐԸ

ՍՈՒՍԱՆՆԱ ԲԱԼԱՅԱՆ

Հիմնաբառեր՝ մարզական տերմինահամակարգ, ժամանակագրական շերտեր, գրաբարյան, բարբառային մարզական տերմիններ, հնագույն փոխառյալ տերմիններ, նոր փոխառյալ տերմիններ, արևմտահայերենյան տերմինների շերտ, նոր տերմինների շերտ, ընդհանուր մարզական տերմիններ

Մարզական տերմինաբանության ժամանակագրական շերտերը անմիջականորեն կապվում են հայերենի տարբեր փուլերի հետ: Սպորտի արագ զարգացումն ու տարածումը, նորանոր մարզաձևերի երևան գալը իրենց հետ նոր հասկացություններ են բերում, որոնք ուսումնասիրության անհրաժեշտություն են առաջացնում: Մարզական տերմինաբանության ժամանակագրական շերտերի ուսումնասիրությունը կարևորվում է՝ մի կողմից տերմինաբանության զարգացմանը հետևելու, մյուս կողմից՝ օտար տերմինները լեզվից դուրս մղելու և մարզական տերմինապաշարը հստակեցնելու համար:

Բառապաշարի ցանկացած մասնագիտական շերտ ծագումնաբանական դասակարգման ենթարկելիս դիտում ենք «որպես մի կայուն ամբողջություն, որ իր մեջ է առնում այն բոլոր բառերը, որոնք գործածվել կամ գործածվում են աշխարհաբարով գրված ողջ գրականության ու մամուլի մեջ՝ անկախ նրանց գործածության աստիճանից, գործառական ոլորտից, տարբերակային բնույթից և այլն» (Աղայան 1984: 119):

Յուրաքանչյուր բնագավառի տերմինաբանություն ներառում է և՛ բնիկ, և՛ փոխառյալ, և՛ հին շրջանից ավանդված, և՛ նորակազմ բազմաթիվ տերմիններ:

Ինչպես այլ տերմինահամակարգեր, այնպես էլ մարզական տերմինահամակարգը, բաղկացած է տարբեր ենթաշերտերից: Մարզական տերմինները, ըստ ժամանակագրական շերտերի, կարելի է դասակարգել հետևյալ կերպ:

1. Ընդհանուր մարզական տերմինների շերտ

Այս շերտի տերմինները գործածական են հայերենի զարգացման բոլոր շրջաններում: Այսպես՝ **ներածիճ, գավաթ, մարզարան,**

մենամարտել, ըմբիշ, ըմբշամարտ, ըմբշամարտիկ, սաղավարտ, ասպարեզ, մրցակից, գոլեմարտ, մրցանակ, մենամարտ և այլն:

2. Հին կամ գրաբարյան մարզական տերմինների շերտ

Այս շարքի տերմինները գործածվել են գրաբարյան շրջանում: Դրանք ժամանակակից մարզական տերմինահամակարգում կա՛մ չեն գործածվում, կա՛մ քիչ են գործածվում:

Նման բառերը որոշ լեզվաբաններ համարում են ներքին փոխառություններ. «Ըստ իրենց անմիջական աղբյուրների՝ փոխառությունները լինում են ներքին և արտաքին: Արտաքին են այլ լեզուներից կատարվող փոխառությունները, ներքին՝ տվյալ լեզվի տարբերակային համակարգերից կամ պատմականորեն նախորդած գրական լեզուներից կատարվող փոխառությունները» (Ջահուկյան, Աղայան, Առաքելյան, Քոսյան 1980: 332): Այդ կարծիքը հիմնավոր չէ, քանի որ գրաբարը վերջին հաշվով հայերեն է, և այդ բառերը փոխառություն համարվել չեն կարող:

Անուրանալի է, որ ժամանակակից հայոց լեզուն գրաբարից ժառանգություն է ստացել որոշակի քանակությամբ տերմիններ: «Սակայն այդ տերմինները վերաբերում են մի քանի մասնագիտությունների՝ փիլիսոփայությանը, աստվածաբանությանը, քերականությանը և այլն, որոնք համապատասխանում են գրաբարյան շրջանի գիտության մակարդակին, և որոնց արժեքը շատ չնչին է թե՛ որակական, թե՛ քանակական տեսակետից» (Ակնարկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիտության և տերմինաբանության, 1982: 170):

Մարզական տերմինաբանության մեջ, թեև քիչ քանակությամբ, բայց, այնուամենայնիվ, կան գրաբարյան տերմիններ:

Բերենք հինհայերենյան շրջանի մարզական տերմինների օրինակներ. այսպես՝ **ագոն** «մրցահանդէս», **սոնապան** «պահպանակ սրունից՝ որպես կօշիկ յօրմէ և ի նիւթոյ, ի ծնկաց մինչև ցոտս», **գուպար** «կռիվ, պայքար, մրցութիւն», **գօլեմարտ** «որ գօտէկոիւ լինի, գօտէմարտութիւն», **ըմբշամարտ** «ըմբիշ մարտնչօղ. ըմբշամարտիկ», **ըմբշամարտութիւն** «ըմբշամրցութիւն. մարտ և մրցանք և արուեստ ըմբշաց. գօտեմարտութիւն. բռնամարտուի», **մարզարան** «մրցարան, վարժարան, հանդիսարան», **մարզումն** «որ և մարզանք, մարզելն», **մրցական** «մրցող, որ կարէ մուրցացի կռուիլ, ըմբիշ», **մրցակից** «գործակից մրցանաց, մարտակից, օգնական, դիմամարտ, հակառակորդ», **մրցանակ** «յաղթանակ, վարձ և պսակ մրցանաց. մրցանակ յաղթութե», **մրցանք** «մրցումն, որ և բռնամարտութիւն, **լախար** «զավազան կամ մահակ գնտածայր», **կռիւմարտիկ** «բռնամարտիկ և բռնամարտութիւն», **նետաճիգ** «1.որպես նետաճգօղ, 2.որպես նետընկէց

մի», **սուսերածիգ** «որ ձգե գուսեր» և այլն (տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1-2, 1979, 1981):

3. Բարբառային մարզական տերմինների շերտ

Այս բառաշերտի տերմինները ժամանակակից հայերենին են անցել բարբառների միջոցով:

Բերենք բարբառային տերմինների օրինակներ՝ **ձեռնալեղ, կռնալեղ** «թևալող», **լեղնորդ** «լողորդ», **մուշակոիվ, կպուր-կպուր** «կռվամարտ», **սուռ** «հաղթանակ», **ջիրիդ** «մականախաղ», **կոխ կենալ, կոխ բռնել, կոխ պրծնել** «ըմբշամարտել», **փահլևան, քյանդրբազ** «լարախաղաց», **ձիաթողս, ձիանդրոս** «ձիարշավ» և այլն:

4. Արևմտահայերենյան մարզական տերմինների շերտ

Այս շարքի տերմիններից են՝ **գավաթ** «բաժակ», **գնդամուղ-բիլիարդ», մարտավարություն** «տակտիկա», **վերջնախաղ** «ֆինալ», **մրցանիշ** «ոեկորդ», **ձեռնամարտ** «1.ձեռքով կռիվ, 2.սուսերամարտ», **մարզադաշտ** «մրցավայր, ստադիոն», **ձիավարիկ** «ժոկեյ», **կրթանք** «1. մարզանք, 2.ուսուցում», **կիսաւարտական** «կիսաեզրափակիչ», **հեծելարշաւ** «1.հեծանվային արշավ, 2.ձիարշավ», **հետսապահ** «ետին գծի խաղացող՝ պաշտպան», **ճատրակ** «շախմատ», **միջնապահ** «միջին գծի խաղացող՝ կիսապաշտպան», **մրցարան** «1.արենա, 2.մրցահրապարակ, մրցադաշտ, 3.մարզադաշտ», **ոստնուկ** «ցատկել», **ցատկորդ** «բարձրացատկով զբաղվող մարզիկ», **հասնառիկ** «գավաթ» և այլն (տե՛ս Սարգսյան 1991, Սաքապետոյան 2011):

Մարզական որոշ տերմիններ չեն յուրացվել ժամանակակից հայերենի՝ արևելահայ գրական լեզվի բառապաշարում և գործածվում են միայն արևմտահայերենում: Այդ կարգի տերմիններից են՝ **հետսապահ** «պաշտպան», **մէջդիր** «տափօղակ», **կրթանք** «մարզանք», **միջնապահ** «կիսապաշտպան», **մրցանշան** «մեդալ», **ջլամարտիկ** «ըմբիշ», **բերդապահ** «դարպասապահ», **կէտ** «գոլ», **ճատրակ** «շախմատ», **սահամոյկ** «չմուշկ», **մրցադահլիճ** «մարզասրահ», **վիճակացոյց** «վիճակագրություն», **պսակաւոր** «դափնեկիր» և այլն:

Արևմտահայ այս կարգի տերմինների փոխարեն արևելահայերենը ստեղծել և գործածում է հայերեն մեկ այլ համանշանակ՝ **ոստնակ**–մեկնալաստ, **վերջնարկ**–մրցավարտ, **մարզիչ**–մարզուսույց, **վազք**–սույր, **հարձակվող**–առաջապահ, **պաշտպան**–հետսապահ, կամ էլ՝ օտար լեզվի փոխառությունը՝ **ֆուտբոլ**–ոտնագնդակ, ոտնագնդակախաղ, **գոլ**–կէտ,

վոլեյբոլ-ծեռնագնդակ, **բիլիարդ**-գնդամուղ, **շախմատ**-ճատրակ, **ժյուրի**-մրցատյան, **մեդալ**-մրցանշան, **ռեկորդ**-մրցանիշ, **չեմպիոն**-ախոյան*

Արևելահայերեն և արևմտահայերեն մարզական տերմինների համեմատությունը ցույց է տալիս, որ հաճախ արևելահայ տերմինները ավելի պարզ, հասկանալի և հեշտ մտապահվող են: Արևմտահայերենում կան մարզական անհաջող տերմիններ՝ սակառագնդախաղ (բասկետբոլ), ոտնագնդախաղ (ֆուտբոլ), մարմանդախաղ (թենիս), գնդամուղ (բիլիարդ) և այլն: Այս տերմինները անհաջող են անբարեհնչյունության, բառի երկարության, բազմաբաղադրիչ լինելու տեսակետից: Սակայն անհաջող լինելով հանդերձ՝ ունեն այն առավելությունը, որ լեզվի սեփական միջոցներով են ստեղծված: Ազգային ձև ունենալու շնորհիվ այդ տերմինները հնարավորություն են ընձեռում տվյալ լեզվով խոսող անհատին ավելի հեշտ հասկանալու տերմինի արտահայտած իմաստը. ցանկացած փոխառյալ տերմին զուրկ է այդ հատկանիշից (Խասապետյան 1984: 169):

Բնավ չի բացառվում, որ այսօր մեզ խորթ, անհարթ ու անսովոր թվացող որոշ մարզական տերմիններ կարող են լայն տարածում ունենալ և իրենց հաստատուն տեղն ու գործածությունը գտնել արևելահայերենում:

Մեծ թվով տերմիններ, որոնք վաղուց արդեն կազմում են արևելահայ տերմինաբանության անբաժանելի մասը, ժամանակին փոխանցվել են արևմտահայերենից:

Հայոց լեզվի տերմինաբանության ընդհանուր շահերը պահանջում են, որ վերանան այդ երկու գրական լեզուների միջև դեռևս գոյություն ունեցող տերմինաստեղծման և տերմինագործածության սկզբունքային որոշ տարբերությունները:

5. Նոր մարզական տերմինների շերտ

Այս շերտի տերմինները ստեղծվել են հայերենի բառակազմական տարբեր եղանակներով.

ա.ածանցմամբ՝ **մականորդ, ծանրորդ, սահնակորդ, մարտավարում, մեկնարկիչ, ջրադահուկորդ, վազորդուհի, գերմարզվածություն, գերծանրքաշային** և այլն,

բ.բառաբարդմամբ՝ **անվադահուկ, անվաչմշկավազք, գնդաթի, բազկամարտ, գեղալող, գոլառատ, մրցաշար, մրցանիշ,**

* **Ախոյան** գրաբարում նշանակում էր «քաջ, առաջամարտիկ, նախահարձակ կտրիճ» . այդ իմաստից առաջացավ «հանուն մի բանի մարտնչող՝ պայքարող» նշանակությունը, իսկ հետո՝ ժամանակակից հայերենում ստացավ հակադիր իմաստը՝ «թշնամի, դիսերիմ հակառակորդ», մինչդեռ արևմտահայերենում, պահպանելով իր նախնական իմաստը, ստացավ նաև «1. մրցակից, մրցորդ, 2. չեմպիոն» նշանակությունները:

ցատկահարթակ, մրցամարտ, մարտարվեստ, հուշամրցաշար, ատամնակալ, մարզաճ և այլն,

գ.պատճենմամբ՝ հակազրոհ (контратака), հակահարված (контрудар), գերմրցաշար (супертурнир), պաշտպան (защитник), կիսապաշտպան (полузащитник), երկամարտ (двуборье), գերհանդիպում (супервстреча), ելման դիրք, ելադիրք (исходное положение), ձեռնամարտ (рукопашный бой), հիմնականգ (основная стойка) և այլն,

դ.կիսապատճենմամբ՝ ռեկորդածին, ռեկորդակիր, մարզաբազա, մոտովազք, թեթևատլետիկա, սպորտդպրոց, կրոսավազք, ավտոմոտոակումբ, ձիասպորտ և այլն,

ե.հապավմամբ՝ ՈՒՄԿ (ուսումնամարզական կենտրոն), ՖՖ (Ֆուտբոլի ֆեդերացիա), ՖԻԴԵ (Շախմատի միջազգային ֆեդերացիա FIDE–Federation Internationale des Esches), ՖԻՖԱ (Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիա.FIFA.Federation Internationale de Football Association), ՖԻԲԱ (Սիրողական բասկետբոլի միջազգային ֆեդերացիա. FIBA Federation Internationale de Basketball Amateur), ՈՒԵՖԱ (Ֆուտբոլի ասոցիացիաների եվրոպական միություն. UEFA Union Europeenne de Football Association), ՊԹԸ (Պրոֆեսիոնալ թենիսիստների ընկերություն), ՕՀՀԿ (Օլիմպիական հերթափոխի հանրապետական կենտրոն), ՊՖԼ (Պրոֆեսիոնալ ֆուտբոլային լիգա), սամբո (самозащита без оружия), ֆիզպատրաստականություն, ֆիզդաստիարակություն և այլն (տե՛ս Դ.Գյուրջինյան, Ն.Հեքեքյան, Հայերենի տառային հապավումների բառարան-տեղեկատու, Ե., 2000):

6. Փոխառյալ մարզական տերմինների շերտ

Հայերենը մարզական տերմիններ է փոխառել տարբեր ժամանակներում: Ժամանակային տեսակետից փոխառյալ մարզական տերմինները կարելի է բաժանել երկու շերտի՝ **հնագույն** (նախաշխարհաբարյան փուլում կատարված) և **նոր** (աշխարհաբարյան փուլում կատարված):

Մարզական հնագույն փոխառություններ են՝ **պարսկերենից՝** ասպախաղ «ծիախաղ», ասպարեզ, շախ, և այլն, **արաբերենից՝** մատ, **հունարենից՝** ատլետ, ակրոբատ, ակրոբատիկա, դելտապլան, ավտոդրոմ, ավտոմոդել, ավտոմոտոակումբ, ավտոմոտոդպրոց, ավտոմոտոդրոմ, ավտոսահնակ, դինամոմետր «ուժաչափ», պալեսթրա, ստադիոդրոմ, ստադիոն, հիպոդրոմ, տակտիկա, տեխնիկա, օլիմպիադա, գիմնաստ, ազոնավար «մրցության մասնակից, մարզիկ», և այլն, **լատիներենից՝** ակվապլան «մարզալաստ», ակվալանգ «մարզահանդերձանք», ավիամոդել, բիաթլոն «դահուկային երկամարտ»,

մոտորով, մոտոդրոմ, մոտոցիկլետ, վելոդրոմ, ֆեդերացիա, ֆիզուր, ռեակցիա, պարտիա, և այլն:

Հնագույն փոխառյալ մարզական տերմինների մեջ գերակշռում են հունարենից և լատիներենից կատարված փոխառությունները:

Մարզական տերմինահամակարգում շատ են նոր փոխառությունները: Աշխարհաբարյան փուլում փոխառություններ կատարվել են հիմնականում եվրոպական լեզուներից և ռուսերենից. այսպես՝ **անգլերենից**՝ ապերկոտ, աուտ, բասկետբոլ, բեյսբոլ, վոլեյբոլ, հանդբոլ, սոֆտբոլ, ֆուտբոլ, վատերբոլ, բադմինտոն, բատերֆլայ, բենդի, բորսլեյ, բոուլինգ, բոքսբռեյ, գոլ, գոլֆ, գեյմ, դոպինգ, ռեկորդ, կրիկետ, նոկաուտ, նոկդաուն, ռալլի, ռաունդ, ռեգբի, թիմ, ռինգ, սպրինտ, սնայպեր, սպիրոմետր, սպորտ, **ֆրանսերենից**՝ արբալետ, բալ, բասկյուլ, բրասս, բիլիարդ, կուլտուրիզմ, բոթաս, դեբյուտ, էտյուդ, պարաշյուտ, ռակետ, ռևանշ, վելոբոլ, վոլանդբոլ, տիր, տուրիզմ, տուրիստ, մեդալ, տրիկո, **գերմաներենից**՝ ալպենշտոկ, գրոսմայստեր, մոտոռոլլեր, ցայտնոտ, ցուգցվանգ, շպագատ, ֆինտ և այլն, **ռուսերենից**՝ բիտա, բայդարկա, լապտա, **իտալերենից**՝ սալտո, **ճապոներենից**՝ աիս ուկե, սոգո-գաշի, ձյու-դո, ձյու-ջիցու, հաջիմե, շիդո, սիկակու, կարատե, սոնո մամա (տե՛ս Բաբայան 1985):

Ժամանակակից հայերենի բառային կազմում որոշակի տեղ են գրավում մարզական փոխառությունները՝ պայմանավորված այդ ոլորտի արագ զարգացմամբ, նրա ժողովրդականացմամբ, զանգվածային բնույթով և նորանոր մարզաձևերի երևան գալով:

Մարզական բազմաթիվ փոխառություններ, մուտք գործելով մեր լեզու, դարձան նրա անբաժանելի մասը և նպաստեցին հայոց լեզվի բառազանձի հարստացմանն ու ճոխացմանը: Դրանցից շատերը ունեն գործածության մեծ հաճախականություն և տարածում են ստացել մեր կյանքում: Ժամանակակից հայերենն աշխատում է փոխառյալ տերմինների դիմաց ստեղծել համարժեք ձևերը: Ժամանակի ընթացքում մեծ մասամբ հաղթում են հայերեն ձևերը, որոշ դեպքերում էլ փոխառյալ տերմինները արմատանում են լեզվում և լայն գործածություն ունենում:

Այսպիսով, մարզական տերմինահամակարգը բաղկացած է ժամանակագրական տարբեր ենթաշերտերից՝ ընդհանուր մարզական, գրաբարյան, բարբառային, արևմտահայերենյան, նոր և փոխառյալ մարզական տերմինների շերտերից, որոնք հանդես են գալիս տարբեր համամասնությամբ. հինհայերենյան մարզական տերմինները ժամանակակից մարզական տերմինահամակարգում կա՛մ չեն գործածվում, կա՛մ քիչ են կիրառվում: Գերակշռում են ընդհանուր մարզական տերմինները, որոնք գործածական են հայերենի բոլոր

փուլերում, ապա՝ նորակազմ մարզական տերմինները և նոր փոխառությունները, որոնց թիվը գնալով ավելանում է՝ պայմանավորված սպորտի արագ զարգացմամբ ու տարածմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984:
2. Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, Ա մաս, Բ մաս, Երևան, 1940, 1951:
3. Ակնարկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիտության և տերմինաբանության, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, 1982:
4. Խասապետյան Ս., Արևելահայերեն և արևմտահայերեն տերմինների համեմատական քննություն, Բանբեր Երևանի համալսարանի, 2(53), Երևան, 1984:
5. Զահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, 1-ին մաս, Ա պրակ, Երևան, 1980:

ԲԱՌԱՐԱՆՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՈՒՆԵՐ

6. Բաբայան Կ., Մարմնամարզական տերմինների տեղեկատու-բառարան, Երևան, 1985:
7. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Հայերենի տառային հապավումների բառարան-տեղեկատու, Երևան, 2000:
8. Էլոյան Ս., Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, 2002:
9. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ.1-4, 1969, 1972, 1974, 1980:
10. Իսպիրյան Մ., Մարզանունների բացատրական բառարան, Երևան, 1984:
11. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, Երևան, 1979, 1981:
12. Սարգսյան Ա., Արևմտահայերենի բառարան, Երևան, 1991:
13. Սաքապետոյան Ռ., Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Երևան, 2011:

REFERENCES

1. Aghayan E., Y'ndhanowr & haykakan bar'agitowt'yown, Er&an, 1984:
2. Atwar'yan H., Hayoc lezvi patmowt'yown, A mas, B mas, Er&an, 1940, 1951:
3. Aknarkner jhamanakakic hayoc lezvi bar'agitowt'yan & terminabanowt'yan, Hr. Atwar'yani anvan lezvi institowt, Er&an, 1982:
4. Xasapetyan S., Ar&elahayeren & ar&mtahayeren terminneri hamematakan qnnowt'yown, Banber Er&ani hamalsarani, 2(53), Er&an, 1984:
5. Jahowkyan G., Aghayan E., Ar'aqelyan V., Qosyan V., Hayoc lezow, 1-in mas, A prak, Er&an, 1980:

DICTIONARIES AND DIRECTORIES

6. Babayan K., Marmnamarzakan terminneri teghekatow- bar'aran, Er&an, 1985:
7. Gyowrjinyan D., Heqeqyan N., Hayereni tar'ayin hapavowmneri bar'aran-teghekatow, Er&an, 2000:
8. E'loyan S., Ardi hayereni norabanowt'yownneri bar'aran, Er&an, 2002:
9. Jhamanakakic hayoc lezvi bacatrakan bar'aran, h.1-4, 1969, 1972, 1974, 1980:
10. Ispiryan M., Marzanownneri bacatrakan bar'aran, Er&an, 1984:
11. Nor bar'girq haykazean lezowi, h. 1-2, Er&an, 1979, 1981:
12. Sargsyan A., Ar&mtahayereni bar'aran, Er&an, 1991:
13. Saqapetoyan R., Arewmtahayere'n-arewelahayere'n nor bar'aran, Er&an, 2011:

СУСАННА БАЛАЯН - ХРОНОЛОГИЧЕСКИЕ СЛОИ СПОРТИВНОЙ ТЕРМИНОЛОГИИ

Ключевые слова: спортивная терминосистема, хронологические слои, габарский, диалектные спортивные термины, древние взаимозаменяемые термины, новые взаимозаменяемые термины, западноармянский слой терминов, новый слой терминов, общие спортивные термины

В статье рассматривались хронологические слои спортивной терминологии.

В работе были изучены спортивные термины, которые относятся как к общим, так и к габарским, диалектным, западноармянским, новым

и заимствованным лексическим единицам языка. Эти хронологические слои представлены в разном соотношении: преобладают общие спортивные термины, которые используются на всех этапах развития армянского языка, а затем новые термины и заимствования, число которых растёт, что обусловлено появлением новых видов спорта.

Изучение хронологических слоев спортивных терминов имеет важное значение, с одной стороны, для наблюдения за развитием терминологии, а с другой - для усовершенствования спортивной терминологии.

SUSANNA BALAYAN - CHRONOLOGICAL LAYERS OF SPORTS TERMINOLOGY

Keywords: *sports terminology system, chronological layers, Grabar, dialectal sports terms, borrowed terms, newly borrowed terms, Western-Armenian layer of terms, new layer of terms, common sports terms*

The article discusses the chronological layers of sports terminology in Armenian. Sports terms that refer to both general and Grabar, dialectal, Western Armenian, as well as new and borrowed words have been studied. Those chronological layers are introduced in different proportions, where the prevailing part are general sport terms, that are used in all stages of the development of the Armenian language. The rest of the chronological layers consist of the newly formed sports terms, loanwords, the number of which is growing due to the emergence of new sports. The study of the chronological layers of sports terms can be used to trace the development of terminology on the one hand, and to clarify the sports terminology, on the other.

Ներկայացվել է՝ 03.03.2021
Գրախոսվել է՝ 03.03.2021